«ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՆԴԻ ՁԱՅՆԸ»
ԵՊՀ 100-ամյակին նվիրված
Միջազգային ուսանողական բիենալե

2019թ. Հայաստանում առաջին անգամ կանցկացվի «ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՆԴԻ ՁԱՅՆԸ» խորագիրը կրող երիտասարդ ստեղծագործողների և կատարողների միջազգային ուսանողական բիենալե, որը նվիրվում է ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին: Բիենալեն կանցկացվի հետևյալ ուղղություններով՝

Ստեղծագործական մրցույթ

1. *Կոմպոզիտորական մրցույթ*
2. *Գրական մրցույթ (միայն էսսեյի դեպքում պարտադիր է «Գիտելիքը լույս է» կամ «Ես սիրում եմ Համալսարանը» թեման)*
3. *Կերպարվեստի, լուսանկարչության և կիրառական արվեստի մրցույթ*

Կատարողական մրցույթ

1. *Երգի մրցույթ (անհատական կատարում, զուգերգ, խմբերգ)*
2. *Ասմունքի և թատերական մրցույթ (ներկայացում մինչև 15 բոպե)*
3. *Պարային մրցույթ (անհատական կատարում, զուգապար, խմբակային կատարում)*
4. *Գործիքային մրցույթ (անհատական և նվագախմբային կատարումներ)*

Ներկայացված ստեղծագործությունները գնահատվելու են պրոֆեսիոնալ ժյուրիի կողմից: Յուրաքանչյուր ուղղության համար նախատեսված մրցանակային տեղերից և պարգևատրումներից բացի, փառատոնի մասնակիցները կստանան նաև պատվոգրեր և հուշանվերներ: Հաղթող մասնակիցները հնարավորություն կստանան մասնակցելու ԵՊՀ 100-ամյակին նվիրված միջոցառումներին, այդ թվում՝ գալա համերգին:

Բիենալեի ընթացքում անցկացվելու են նաև հայ արվեստի և մշակույթի վերաբերյալ դասախոսություններ, քննարկումներ, կլոր-սեղաններ, ՀՀ անվանի մասնագետների կողմից վարպետության դասընթացներ:

Բիենալեին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության, ինչպես նաև բոլոր օտարերկրյա բուհերի ուսանողները: Մասնակցության համար անհրաժեշտ է լրացնել հայտը, դրան կցել նաև ինքնակենսագրությունը, անձնագրի պատճեն, տվյալ բուհից տրված տեղեկանքը, ներկայացվող աշխատանքի էլեկտրոնային տարբերակը:
Հայտերի ընդունման վերջնաժամկետը Ապրիլի 30-ն է: Մնացյալ մանրամասների վերաբերյալ գրանցված մասնակիցները կտեղեկացվեն անհատապես:
Հայտաձևի մեկ օրինակը կցված է:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ԵՊՀ Մշակույթի կենտրոն:
Հեռ՝ քաղ. (060)710-183, (060)710-183, ներքին՝ 11-83, 11-84
Կայք էջ՝ www.ysu.am/culture
https://www.facebook.com/ephculturecenter/
Էլ. Հասցե՝ culturecenter@ysu.am